# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՍՏԱՆ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 23 - 24 (16826) ՇԱԲԱԹ 21 ՄԱՐՏԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ COVID-19-Ի ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

*Մարտի 19-ին անցկացվեց Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի նիստ, որի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, նախարարությունների եւ գերատեսչությունների առաջին դեմքերը, առողջապահության ոլորտի հրավիրված մասնագետները:*



Խորհրդի նիստում ներկայացված տեղեկատվության համաձայն, այսօրվա դրությամբ Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսի 44 հաստատված դեպք, որոնցից մեկն ապաքինվել եւ արդեն դուրս է գրվել: Կարանտինի ռեժիմում է մնում 1 925 մարդ, ստացիոնար հսկողության տակ՝ 271-ը:

Վրաստանի վարչապետի խոսքով, կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին փուլում համատեղ ջանքերով հաջողվեց նվազագույնի հասցնել արտաքինից վիրուսի ներթափանցման վտանգը, թեպետ դա չի բացառում ներսում վարակի փոխանցումը: Հետեւաբար, ներկա դրությամբ ջանքերը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ



*Մարտի 17-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացված ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունվեց որոշում, ըստ որի, երկրում արտակարգ իրավիճակ հայտարարելու անհրաժեշտություն չկա:*

Խորհրդի նիստում ազգային անվտանգության համատեքստում քննարկվեց նոր կորոնավիրուսի տարածման պայմաններում ստեղծված իրավիճակը, ընդ որում, հատուկ ուշադրություն հատկացվեց երկրի տնտեսական անվտանգության առումով առկա ռիսկերին ու մարտահրավերներին:

Ինչպես նշվեց Անվտանգության խորհրդի նիստում, Վրաստանի կառավարությունն առաջին օրվանից հետեւում է հատուկ գործողությունների

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՐ ԳԵՐԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

*Վրաստանի կառավարությունը կորոնավիրուսի հետ կապված շարունակում է գործել արտակարգ իրավիճակում:*

Գործադիր բարձրագույն իշխանության հերթական նիստում վարչապետ Գիորգի Գախարիան, խոսելով վարակի տարածումը կանխելու հերթական միջոցառումների մասին, անդրադարձավ հետճգնաժամային ծրագրերին: Նրա խոսքով, իշխանությունն անում է ամենը, որպեսզի վարակի տարածման գագաթնակետը լինի կառավարելի:

- Գագաթնակետը կախված է նրանից, թե ինչպիսին կլինի մեր կառավարման որակը: Սա շատ կարեւոր է: Մեր նպատակն է, չհասնել գագաթնակետին: Երբ ասում ենք քաղաքացիական ինքնագիտակցություն, պատասխանատվություն, սրանք զուտ բարձրաձայն խոսքեր չեն: Մեր խնդիրն է՝ որքան հնարավոր է, արդյունավետ պայքարել նվազագույն զոհողությամբ: Այս վարակը կհաղթահարենք, այս իրավիճակից դուրս կգանք, սակայն մեր էկոնոմիկան պետք է լինի այնպիսի վիճակում, որ արագ կարողանանք վերականգնել կորցրած դիրքերը,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ գերխն-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԵՐԿՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

*Կորոնավիրուսի արագ տարածման պատճառով Հայաստանի կառավարության որոշմամբ, մարտի 16-ից երկրում գործում է արտակարգ դրություն: Այն կգործի մինչեւ ապրիլի 16-ը: Մարտի 20-ի դրությամբ, Հայաստանում նոր տեսակի կորոնավիրուսով վարակվածների թիվը հասել է 136-ի, ներկայումս շուրջ 600 մարդ գտնվում է ինքնամեկուսացման ռեժիմում, մեկն արդեն ապաքինվել է:*

Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի եւ միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով, կստեղծվի պարետատուն, որը ղեկավարելու համար պարետ է նշանակվել փոխվարչապետ Տիգրան Ավինյանը: Պարետատան կազմում ի պաշտոնե ընդգրկված են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ արտակարգ իրավիճակների, առողջապահության, էկոնոմիկայի, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարները, Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարը, ՀՀ ոստիկանության պետը, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի ղեկավարը, ՀՀ Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի եւ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարները: Պարետատան աշխատանքների սպասարկումը ապահովում են վարչապետի աշխատակազմը եւ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակը:

*(Արտակարգ դրությամբ նախատեսված միջոցառումների մասին տե՛ս 7-րդ էջում)*

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ 45-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ





*Մարտի 19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորել է Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիային ծննդյան օրվա առիթով: Շնորհավորական խոսքում, մասնավորապես, ասված է.*

«Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները եւ լավագույն բարեմաղթանքները Ձեր ծննդյան օրվա առիթով:

Հայաստանի եւ Վրաստանի միջեւ արդի բարեկամական հարաբերությունները հիմնված են պատմական հարուստ ավանդույթների վրա, եւ այսօր էլ առանձնանում են փոխադարձ վստահությամբ ու միմյանց նկատմամբ հարգանքի խոր զգացումով:

Բարձր եմ գնահատում մեր միջեւ ձեւավորված անձնական ջերմ հարաբերությունները: Համոզված եմ, որ համատեղ ջանքերով կկարողանանք օգտագործել երկկողմ համագործակցության ողջ ներուժը մեր հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու նպատակով:

Մաղթում եմ նորանոր ձեռքբերումներ Ձեր կարեւոր եւ պատասխանատու պաշտոնում եւ հաջողություն՝ տարածաշրջանի զարգացման ու կայունության ամրապնդմանը միտված Ձեր բոլոր ծրագրերին, իսկ բարեկամ վրացի ժողովրդին՝ բարօրություն ու առաջընթաց:

Մեկ անգամ եւս սրտանց շնորհավորում եմ Ձեր տարեդարձի կապակցությամբ՝ Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին մաղթելով ամենայն բարիք, քաջառողջություն եւ երջանկություն»:

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ, ՉԵՆ ԱՎԵԼԱՆԱ ՇԱՔԱՐԱՎԱԶԻ, ԱԼՅՈՒՐԻ ԵՎ ԵՎՍ ՅՈԹ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացված միջգերատեսչական համակարգով խորհրդի նիստում գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչները ներկայացրին տվյալներ՝ երկրում առկա պարենամթերքի պաշարների, դրանց իրատեսական օգտագործման միջոցառումների մասին:*

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության ղեկավար Լեւան Դավիթաշվիլին թվարկեց այն ինը մթերքի անունները, որոնց գները իշխանությունները վերահսկելու են:

Հաշվի առնելով ազգային տարադրամի վերջին ժամանակներում վավերացված կտրուկ անկումը՝ կառավարությունը առանձնակի ուշադրություն է հատկացնում առաջին անհրաժեշտության պարենամթերքի գներին:

- Մենք հայտարարել էինք, որ աշխատում ենք ինը մթերքների գների վերահսկման մեխանիզմի վրա, որպեսզի գները չբարձրանան: Դրանք են՝ բրինձը, մակարոնեղենը, արեւածաղկի ձեթը, շաքարավազը, ալյուրը, ցորենը, կաթի փոշին: Երեկ այս ցանկին ավելացվել են հնդկաձավարը եւ լոբին,- հայտարարեց Լեւան Դավիթաշվիլին եւ հավելեց, որ կառավարությունը պայմանավորվել է ներմուծողների եւ մատակարարների հետ արտարժույթի ապահովագրության ռիսկերի վերաբերյալ:

- Մենք կարող ենք փոխհատուցել գնի եւ փոխարժեքի տարբերությունը, որպեսզի նրանք պահպանեն կոնկետ գինը սնունդն ապահովելու հարցում,- նշեց նախարարը:

Նրա խոսքով, ներկրողները եւ մատակարարները պահպանում են գները, եւ կառավարությունը վերահսկում է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ COVID-19-Ի ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պետք է գործադրվեն ներսի փոխանցումների դեմ պայքարում: Վարչապետի խոսքով, չնայած իրականացված միջոցառումների, չի կարելի բացառել վարակվածների թվի կտրուկ ավելացման հավանականությունը եւ հարկ է ժամանակին քայլեր ձեռնարկել մարդկանց անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Ճիշտ է, ինչպես նշեց վարչապետը, երկրում դեռեւս չի ծագել արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտություն, սակայն արդեն այսօր Վրաստանի նախագահի եւ խորհրդարանի ղեկավարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, անհրաժեշտության դեպքում, մի քանի ժամվա ընթացքում իրականացնել արտակարգ դրության անցնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները:

Որպես կորոնավիրուսի տարածման կանխիչ միջոց՝ վարչապետը կարեւորեց արդեն գործող միջոցառումների խստացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, մարտի 20-ից երկրի ողջ մասշտաբով դադարեցվում են բոլոր ուղղություններով չվերթերը, կիրականացվեն միայն տարբեր երկրներից Վրաստանի քաղաքացիներին հայրենիք վերադարձնելու չվերթերը: Բացի այդ, Վրաստանի բոլոր քաղաքացիները, անկախ ժամանման երկրից, կտեղափոխվեն կարանտինային գոտի:

Որպես կանխիչ միջոցառում՝ Վրաստանի մասշտաբով փակվելու են առեւտրի բոլոր կետերը, բացառությամբ՝ սննդի խանութների, դեղատների, բենզալցակայանների, փոստային փոխանցումների ու բանկերի:

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՄԱԿ-Ի ԱՀԿ-Ն ԿՏՐԱՄԱԴՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

***Մարտի 14-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հեռախոսազրույց ունեցավ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրեն Թեդրո Ադանոմ Գեբրեյուսի հետ:***



Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ կայացած հեռախոսազրույցի ընթացքում, Սալոմե Զուրաբիշվիլին Թեդրո Ադանոմ Գեբրեյուսի հետ քննարկեց կորոնավիրոսի հետ կապված երկրում տիրող իրավիճակը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը հաստատեց, որ կազմակերպությունը նոր կորոնավիրուսի հաղթահարման համար Վրաստանին կշարունակի ցուցաբերել տեխնիկական եւ փորձագիտական աջակցություն: Նա բարձր գնահատեց Վրաստանի արձագանքը կորոնավիրուսի տարածման սպառնալիքին:

Իր հերթին, Սալոմե Զուրաբիշվիլին նշեց, որ Վրաստանը հետեւում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականներին եւ հավելեց, որ երկրում իրավիճակը ենթակա է վերահսկման ու կառավարման:

Զրույցին անդրադարձ կատարվեց բռնազավթված տարածքների բնակչությանը կորոնավիրուսի տարածման ռիսկերից պաշտպանելու կարեւորությանն ու անհրաժեշտությանը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի խոսքով, կազմակերպությունը կօգտագործի իր ձեռքի տակ գտնվող բոլոր ռեսուրսները՝ բռնազավթված տարածքների բնակչությանը համաճարակից պաշտպանելու համար:

# ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԵՎ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

***Վրաստանի խորհրդարանական մեծամասնությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ:***



Ինչպես հայտարարեց խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, մեծամասնությունը ծրագրում է մշակել օրենսդրական փոփոխություններ, որոնք կքննարկվեն արագացված կարգով, եւ որոնք վերաբերում են կարանտինի կարգը խախտողների նկատմամբ պատժամիջոցներ սահմանելուն:

- Վրաստանը արդյունավետ կերպով կարողանում է զսպել կորոնավիրուսի տարածումը: Այս իրավիճակը բազմաթիվ մարդկանց անձնուրաց աշխատանքի վաստակն ու արդյունքն է: Թեպետ, միաժամանակ բացահայտվում են ինքնամեկուսացման, ինչպես նաեւ կարանտինի ռեժիմի խախտման փաստեր: Մասնավորապես, պարեկային ոստիկանության կողմից բացահայտվել եւ կարանտինային գոտի է տեղափոխվել ինքնամեկուսացման կարգը խախտած 141 անձ:

Խորհրդարանական մեծամասնությունը մշակել է հատուկ օրինանախագիծ, որը նախատեսում է պատժամիջոցներ ինքնամեկուսացման կամ կարանտինի ռեժիմի խախտման դեպքում: Մասնավորապես, ֆիզիկական անձանց կողմից վերոնշյալ կարգի խախտման դեպքում, կսահմանվի 3 հազար լարիի տուգանք, իսկ իրավաբանական անձի համար այդ գումարը կկազմի 15 հազար լարի: Կրկնակի իրավախախտման դեպքում, տվյալ անձը կենթարկվի քրեական պատասխանատվության՝ վեց ամսից մեկ տարի տնային կալանք, կամ մեկ տարվա ազատազրկում,- հայտարարել է Արչիլ Թալակվաձեն:

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ, ՉԵՆ ԱՎԵԼԱՆԱ ՇԱՔԱՐԱՎԱԶԻ, ԱԼՅՈՒՐԻ ԵՎ ԵՎՍ ՅՈԹ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առեւտրի այդ օղակները, որպեսզի գները չբարձրանան:

- Առաջին փուլում մենք արդեն ապահովագրում ենք գները, եւ կարեւոր է, որ այն հասնի սպառողին,- նշեց Լեւան Դավիթաշվիլին:

Ավելի վաղ, նախարարը նշել էր, որ բոլոր շահադետները (սպեկուլյանտ), ովքեր արհեստական բարձրացնում են գները, օրենքով կպատժվեն:

Խոսելով երկրում առկա պարենամթերքի պաշարների մասին՝ հացահատիկի եւ ալյուրի արտադրողների միության գործադիր տնօրեն Լեւան Սիլագավան հայտարարեց, որ Վրաստանում առկա է հացահատիկի բավարար պաշար, համապատասխանաբար, ալյուրի եւ հացի գինը կայուն է, եւ այսպես էլ կշարունակվի:

ՏԱՐԱԴՐԱՄ

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԼԱՐԻԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ԲՈԼՈՐ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ




Նոր կորոնավիրուսով պայմանավորված՝ համաշխարհային տնտեսական անկումը բացասական ազդեցություն է գործում նաեւ Վրաստանի էկոնոմիկայի, մասնավորապես, ազգային տարադրամի՝ լարիի փոխարժեքի վրա: Վրաստանում կորոնավիրուսով վարակման առաջին դեպքի հայտնաբերումից 13 օրվա ընթացքում, դոլարի համեմատ լարին արժեզրկվեց 30 տոկոսով՝ սահմանելով արժեզրկման նոր ռեկորդ: Մարտի 20-ի դրությամբ, ազգային տարադրամի արժեքը մեկ դոլարի համեմատ սահմանվեց 3,158 լարիի սահմաններում, մեկ եվրոյի արժեքը կազմեց 3,4109 լարի:

Վրաստանի Ազգային բանկը լարիի արժեզրկումն արգելակելու նպատակով, մարտի 19-ին բաց աճուրդի դուրս բերեց շուրջ 40 միլիոն դոլար: Նշենք, որ մինչ այդ՝ մարտի 13-ին, Ազգային բանկը աճուրդի էր դուրս բերել 20 միլիոն դոլար:

Ինչպես հայտարարեց Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն, նոր կորոնավիրուսի գլոբալ տարածման արդյունքում համաշխարհային տնտեսական ակտիվությունը զգալիորեն նվազել է, ապրանքի նկատմամբ պահանջարկի նվազեցումը հանգեցրել է ազգային տարադրամների կուրսի անկման: Հենց դրանով է պայմանավորված նաեւ լարիի անկումը, թեպետ, ինչպես վստահեցրեց Ազգային բանկի նախագահը, Ազգային բանկն ու երկրի կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում են լարիի անկումն արգելակելու, առաջին սպառման ապրանքների գների կայունացման ուղղությամբ:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

*Եվրոպական միությունը մոտ ժամանակներում պատրաստվում է արգելել օտարերկրացիների ճանապարհորդությունները միության սահմաններում կորոնավիրուսի տարածումը սահմանափակելու համար: Բացառություն կարող են կազմել միայն անհետաձգելի դեպքերը:*

*Սահմանափակումները կգործեն երեսուն օր:*

ԱՄՆ

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

*Մարտի 20-ից ԱՄՆ-ում սկսվել է կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի կլինիկական փորձարկումը: Նոր դեղորայքը փորձարկվելու է վարակված 14 անձի վրա: Փորձարկմանը մասնակցում են միայն կամավորները: ԱՄՆ ազգային առողջապահության գերատեսչության տեղեկատվությամբ, ներկա դրությամբ վարակվել է 16058 մարդ: Բուժվածների թիվը կազմում է 125, 219-ը վախճանվել է:*

ԻՐԱՆ

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԿԻԶԱԿԵՏՆ ԱՆՑԵԼ ԵՆ

*Ինչպես հայտարարեց Իրանի նախագահ Հասան Ռոուհանին, Իրանը արդեն հաղթահարել է կորոնավիրուսի հաղթահարման կիզակետը:*

*- Դատելով թվերից՝ մենք կիզակետը հաղթահարել ենք, թեպետ բնակչությանը խորհուրդ եմ տալիս մնալ բնակարաններում եւ պահպանել բժշկական հանձնարարականները,- հայտարարեց Իրանի նախագահը:*

*Հիշեցնենք, որ ներկա դրությամբ Իրանում վավերացվել է 15 հազար վարակված, մահացածների թիվը հասնում է 853-ի:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՄԶԿԻԹՆԵՐՈՒՄ ԱՐԳԵԼՎԵԼ Է ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՂՈԹՔԸ

*Վերջին տվյալներով, Թուրքիայում կորոնավիրուսով վարակվածների թիվը հասել է գրեթե յոթ տասնյակի: Թուրքիայի կրոնական հարցերով մարմինն ընդունել է, որ ըստ որի, երկրի ողջ մասշտաբով, մզկիթներում զանգվածային աղոթքը ժամանակավորապես արգելվում է:*

G7

## ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿԱՌՆՉՎԵՆ ՏԵՍԱԿԱՊՈՎ

*ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կչեղարկի հունիսին նախատեսված Մեծ յոթնյակի՝ G7-ի առաջնորդների հանդիպումը ԱՄՆ-ում: Պատճառը կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված առկա իրավիճակն է:*

*Նման որոշման նպատակն այն է, որ յուրաքանչյուր երկիր կենտրոնանա իր ունեցած ողջ ռեսուրսի վրա՝ պատասխան տալու կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորած առողջապահության ոլորտում առկա մարտահրավերներին:*

*Նշվում է, որ շփումը կլինի տեսակապի միջոցով, ընդ որում, ոչ միայն հունիսին, այլեւ ապրիլին եւ մայիսին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻՆ ԿԲՈՒԺԵՆ ՆԱԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԸ

*Մարտի 17-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն հանդիպում ունեցան երկրում գործող մասնավոր կլինիկաների ղեկավարների հետ:*



Հանդիպմանը մասնավոր կլինիկաների ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին ներկայիս բարդ պայմաններում կանգնել պետության կողքին եւ անհրաժեշտության դեպքում կորոնավիրուսով վարակված անձանց ընդունել սեփական կլինիկաներում:

Վարչապետի խոսքով, կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին փուլում հիմնական բեռը կրելու են պետական կլինիկաները, եւ այդ նպատակով արդեն պատրաստվել են մի շարք բժշկական հաստատություններ: Սակայն, երկիրը անցնում է վարակի տարածման նոր փուլի եւ հնարավոր է անհրաժեշտ լինեն լրացուցիչ մահճակալներ եւ դրանում կօգնեն մասնավոր կլինիկաները:

Կլինիկաների ղեկավարները նշել են, որ անհրաժեշտության դեպքում կլինիկաներ կտրամադրեն ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ մարզերում:

Մասնավոր կլինիկաների ղեկավարները դրական են գնահատել կորոնավիրուսի դեմ պայքարում կառավարության կողմից իրականացրած քայլերը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ շարունակվելու է պետության եւ մասնավոր կլինիկաների միջեւ ակտիվ շփումը, եւ այդ գործընթացը վերահսկելու է բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Հանդիպմանը մասնակցում էին մոտ 20 մասնավոր կլինիկաների ղեկավարներ եւ կառավարության տնտեսական թիմի նախարարներ:

## ԻՆՉՊԻՍԻՆ Է ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

### ՅՈՒՐԻ ՈՒՆԱՆՅԱՆ. «ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎՈՒՄ Է ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»



Կորոնավիրուսի տարածման կանխարգելման շրջանակներում, ինչպես ողջ Վրաստանում, այնպես էլ՝ Ախալքալաքի մունիցիպալիտետում ակտիվ միջոցառումներ են անցկացվում:

Ինչպես մեզ հետ հեռախոսազրույցում ասաց Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Ունանյանը, սերտ համագործակցելով տեղում գործող հասարակական առողջապահության կենտրոնի, ոստիկանության վարչության եւ անվտանգության ծառայության բաժնի հետ, համատեղ ջանքերով խիստ վերահսկողություն ենք իրականացնում, որի արդյունքում փետրվարի վերջից մինչ օրս ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, ինքնամեկուսացման պայմանակարգ է հաստատվել մունիցիպալիտետի 318 բնակչի համար:

- Նշենք, որ բոլոր նրանք, առանց բացառության, մեր մունիցիպալիտետի բնակիչներն են եւ օրերս Ախալքալաքի են եկել Հայաստանից: Բարեբախտաբար, կորոնավիրուսի ախտանիշներ նրանց մոտ չի նկատվել, ինքնամեկուսացումն անհրաժեշտ է, որպեսզի համոզվեն, որ այդ ախտանշանները 14 օրվա ընթացքում ի հայտ չեն գա: Բոլորի ինքնազգացողությունը լավ է, մունիցիպալիտետը եւ ՀԱԿ-ը մշտական կապ են պահպանում այդ մարդկանց հետ: Ավելացնեմ, որ բոլոր նրանք զգուշացված են ինքնամեկուսացման պայմանների խստիվ կատարման հարցում,- նշեց Յուրի Ունանյանը:

### ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ, ՈՒՆԵՆՔ 143 ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԱՆՁ»



Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, պատասխանելով կորոնավիրուսի կապակցությամբ շրջանում իրավիճակի մասին «Վրաստան» թերթի հարցին, ասաց.

- Ելնելով մայրաքաղաքից ստացվող հրահանգներից ու հանձնարարականներից՝ հասարակական առողջապահության կենտրոնի եւ մյուս մի շարք ծառայությունների հետ իրականացնում ենք վարակի տարածման արգելափակման մի շարք միջոցառումներ: Արդյունքում, ինքնամեկուսացման պայմանակարգ է սահմանվել 143 քաղաքացու համար:

- Ճիշտ է, բարեբախտաբար, նրանց մոտ առայժմ կորոնավիրուսի վարակ չի հայտնաբերվել, սակայն, նկատի ունենալով արտասահմանից ժամանած մեր քաղաքացիների ինքնամեկուսացման մասին հանձնարարականը, Հայաստանից ժամանած մեր շրջանի բնակիչները մեկուսացվել են: Բացի այդ, դպրոցներում, հասարակական վայրերում անցկացվում են ախտահանման աշխատանքներ: Ներկայումս մշտական կապ ենք պահպանում եւ խստորեն վերահսկում ենք ինքնամեկուսացման մեջ գտնվողներին: Նշեմ նաեւ, որ բոլոր նրանք զգուշացված են կարգի խախտման համար պատասխանատվության հարցում,- հայտարարեց Անի Մոսոյանը:

## ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ



*Նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու եւ բնակչությանը լրացուցիչ ռիսկերից պաշտպանելու նպատակով, Թբիլիսիի քաղաքապետարանը անցնում է ինտենսիվ աշխատանքային պայմանակարգի:*

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը եւ ելնելով նրանից, որ մունիցիպալային նախագծերում ու հաստատություններում աշխատող մարդիկ կարող են հայտնվել առանց եկամտի, որոշում է ընդունվել անշեղորեն իրականացնել այդ նախագծերի ֆինանսավորումը: Մասնավորապես, անկախ սպասարկման դադարեցման, կշարունակվի ոչ մունիցիպալային մարզադպրոցների, լողավազանների եւ աուտիստ երեխաների համար նախատեսված կենտրոնների մանկավարժների աշխատավարձի հանձնումը, այն պայմանով, որ կորոնավիրուսի տարածման պատճառով դադարեցված պարապմունքները ապագայում վերականգնվեն: Բացի այդ, կշարունակվի սոցիալապես անպաշտպան ակադեմիական բարձր առաջադիմություն ունեցող, ինչպես նաեւ պահանջարկ չվայելող մասնագիտություններով շահագրգռված ուսանողների նախապատրաստման նախագծի ֆինանսավորումը:

Կախա Կալաձեն խոսեց նաեւ քաղաքապետարանի նոր նախաձեռնության մասին, ըստ որի, մոտ 600 փոքր եւ միջին ձեռնարկատեր, որոնք ձեռնարկատիրական գործունեության համար մունիցիպալիտետին պատկանող հողամասը վարձակալել են քաղաքապետարանից, երեք ամսով ազատվում են վարձավճարից:

## ԵՐԿՐԻ ԲԱՆԱԿՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԶՈՐԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ

*Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլու որոշմամբ, կորոնավիրուսի հնարավոր տարածումը կանխելու համար, Վրաստանի պաշտպանության ուժերը մարտի 21-ից անցնում են զորանոցային պայմանակարգի:*



Զորանոցային պայմանակարգի ընթացքում զինվորներին արգելվում է լքել զորամասի տարածքը:

«Նման կանխարգելիչ միջոցառումները զգալիորեն կնվազեցնեն զորամասերում վիրուսի տարածման հավանականությունը: Զորամասերին կտրամադրվի անհրաժեշտ ամեն պարագա: Այս իրավիճակին անցնելը կապված է ռազմական անձնակազմի եւ նրանց ընտանիքների պաշտպանության հետ», - ասվում է հայտարարության մեջ:

Պաշտպանության նախարարության տվյալներով, յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է լրացնել հատուկ հարցաթերթիկ՝ կորոնավիրուսի կանխարգելումը առավելագույնի հասցնելու համար: Ռազմական ոստիկանության ստորաբաժանումը պարտավոր է վերահսկել ինքնամեկուսացման մեջ գտնվողներին:



### ՆԻՆՈ ՔԱԴԱԳԻՁԵՆ՝ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ



*Մարտի 17-ին Վրաստանի խորհրդարանը լիագումար նիստում երկրի Գերագույն դատարանի նախագահ ընտրեց Նինո Քադագիձեին: Նրա թեկնածությանը աջակցել է 82 պատգամավոր, դեմ չեն արտահայտվել:*

*Քվեարկությանը չեն մասնակցել «միասնական ազգային շարժման» եւ «Եվրոպական Վրաստանի» ներկայացուցիչները, որոնք շարունակում են քաղաքական բոյկոտը:*

*Լիագումար նիստին ներկա էր նաեւ Նինո Քադագիձեն:*

*Նա սեփական տեսակետը ներկայացրել է իրավական հարցերով հանձնաժողովին, որտեղ նրան լսել են երկու ժամվա ընթացքում:*

*Նինո Քադագիձեն մանրամասն խոսել է այն բարեփոխումների մասին, որոնք մտադիր է իրականացնել Գերագույն դատարանում:*

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ՝ ՄԻԱՅՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին բնակչությանը կոչ է արել զերծ մնալ արդարադատության տներ, հանրային կենտրոններ, նոտարական բյուրոներ այցելելուց:*

*- Ցանկանում եմ դիմել բոլորին եւ կոչ անել, որ այսօրվանից երկու շաբաթվա ընթացքում առանց ծայրահեղ անհրաժեշտության չգալ արդարադատության տներ, հանրային կենտրոններ, ռեեստրի տարածքային ծառայություններ եւ նոտարական բյուրոներ,- հայտարարել է Ծուլուկիանին:*

### «ԵՐԱԽՏԻՔԻ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԺԻՇԿՆԵՐԻՆ

*Մարտի 18-ին կամավորների խմբի նախաձեռնությամբ, ի նշան բժիշկների նկատմամբ երախտագիտության, Վրաստանում կայացավ «Երախտիքի ծափահարություններ» վերտառությամբ ակցիան: Ուղիղ 21:00-ին քաղաքացիները բժիշկներին իրենց շնորհակալությունը հայտնեցին ծափողջյուններով: Նրանք պատշգամբներից ծափերով քաջալերեցին բժիշկներին, որոնք հոգում են քաղաքացիների առողջության մասին:*

*Կորոնավիրուսի պանդեմիայի հետ կապված՝ բժիշկների նկատմամբ երախտագիտության այլ ձեւին են արդեն դիմել Եվրոպայի երկրներում, այդ թվում՝ Իտալիայում եւ Իսպանիայում:*

### ԴԻՄԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Վրաստանի էկոնոմիկայի նախարարության հաղորդմամբ, Վրաստանում արդեն մեկնարկել է բժշկական պաշտպանիչ դիմակների արտադրությունը:*

*Գերատեսչությունից տեղեկացնում են, որ Վրաստանում արտադրված դիմակների առաջին խմբաքանակը նախ կբաժանվի այն քաղաքացիներին, որոնք ելնելով աշխատանքային պարտականություններից ամենօրյա ռեժիմով շփվում են այլ քաղաքացիների հետ:*

*Ինչ վերաբերում է Վրաստանում արտադրված դիմակների գնին, ապա դեռեւս որոշում չի կայացվել, թե որքան կարժենան դրանք:*

*Նշենք նաեւ, որ արդեն իսկ արտադրվել է 500 հազար դիմակ եւ փոխանցվել պետությանը:*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ

# ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծրագրին եւ որոշումներ է ընդունում իրադարձությունների զարգացմանը համապատասխան:

Նախօրեին՝ մարտի 16-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորությամբ անցկացված միջգերատեսչական համակարգով խորհրդի հերթական նիստում, Վրաստանում կորոնավիրուսի տարածումը կանխելու միջոցառումների շրջանակներում ներկայացվեց գործողության ծրագիրը:

Համաձայն կառավարության որոշման, ընթացիկ տարվա մարտի 18-ից երկու շաբաթով արգելվում է օտարերկրացիների մուտքը Վրաստան: Ժամանակավորապես փակվում են Վրաստանում գործող լեռնադահուկային հանգստավայրերը: Բնակավայրերում գործող սրճարաններին, ռեստորաններին եւ բարերին խորհուրդ է տրվում ժամանակավորապես սահմանափակել քաղաքացիներին մատուցվող ծառայությունը եւ աշխատել հեռավար սպասարկման սկզբունքներով: Բացի այդ, կառավարության աշխատակազմում ձեւավորվելու է միջգերատեսչական համակարգով խորհրդի նիստերում ընդունած որոշումների կատարման մոնիտորինգի խումբ:

Հաշվի առնելով, որ նոր կորոնավիրուսը առանձնակի վտանգավոր է տարեց մարդկանց համար, խորհուրդը 70 եւ ավելի տարեկան քաղաքացիներին խորհուրդ է տալիս առավելագույնս խուսափել հասարակական մարդաշատ վայրերից եւ հնարավորության սահմաններում գտնվել մեկուսացման պայմաններում, որպեսզի կանխեն վարակման հնարավորությունը:

Կառավարության ղեկավարի խոսքով, նիստում առկա է կտրուկ նշանակության չորս հանգամանք, որի արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա հաղթահարել առկա մարտահրավերը: Այդ չորս հանգամանքներն են. առողջապահությունը, էկոնոմիկան, լոգիստիկան եւ պահուստների կառավարումը, հասարակական կարգուկանոնը: Յուրաքանչյուր վերոնշյալ ուղղության համար պատասխանատվությունը դրվում է համապատասխան ճյուղի նախարարի վրա:

Խորհրդի նիստում վարչապետը լրատվություն է ստացել Վրաստանում նոր կորոնավիրուսով վարակված հիվանդների առողջության եւ կլինիկաների պատրաստվածության մասին: Հանդիպմանը նշվել է, որ այսօրվա դրությամբ վարակված է 44 մարդ: Նրանց մեծամասնության առողջական վիճակը բավարար է:

Համակարգող խորհուրդը տեղեկացվել է, որ այս փուլում կարանտինում կա 1592 մարդ, իսկ 262 մարդ մնում է վերահսկողության տակ:

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՐ ԳԵՐԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիրը աշխատատեղերի պահպանումն ու յուրաքանչյուր քաղաքացու նպատակային աջակցությունն է:



Վարչապետի խոսքով, մարտահրավերներ կլինեն, եւ կլինեն ընկերություններ, որոնք, հավանաբար, չեն կարողանա դիմակայել նման մարտահրավերների, ինչպես նաեւ ընկերություններ, որոնք կգործարկվեն:

- Մենք խոսում ենք բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ եւ ասում, որ իրենց սոցիալական պատասխանատվությունն ու նրանց գործարար հետաքրքրությունը պետք է լինի հետեւյալը, որ այս աշխատատեղերը եւ այն մարդկանց, ում նախապատրաստել ենք, պետք է պահպանել, որ վարակին հաղթելուց հետո նրանց ներուժն օգտագործենք երկրի տնտեսության բարելավման համար: Դա մեր հիմնական նպատակն է: Իհարկե, գնահատականները տարբեր կլինեն: Կլինեն մարդիկ, ովքեր լիովին բավարարված չեն լինի, սակայն մեր խնդիրն է ապահովել մեր քաղաքացիների առողջությունը, նրանց կյանքը,- հայտարարել է կառավարության ղեկավարը:

## ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԵՐԿՐՈՒՄ ԱՌԿԱ Է ՆԵՐՎԱՐԱԿԻ ՆԱԽԱԴԵՊ»



Հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի տեղեկատվությամբ, գրանցվել է նոր կորոնավիրուսի երրորդական փոխանցման դեպք, որը տեղի է ունեցել շփման հետեւանքով:

Մարտի 20-ի ճեպասուլիսում Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ ներկա դրությամբ Վրաստանում գրանցված է նոր կորոնավիրուսի 44 հաստատված դեպք:

- Այսօր 44 դեպք կա: Այս նոր դեպքերը կապված են Իտալիայի հետ: 44 դեպքերից երկուսը կապված են Իրանի, իսկ մյուս դեպքերը ուղղակի կամ անուղղակի՝ Իտալիայի հետ, որից 12-ը ուղեւորության արդյունք են, իսկ 16-ը՝ շփման: Հիմա մենք ունենք այսպես կոչված երրորդական փոխանցման դեպք, այսինքն՝ շփումից: Երբ ունենք երրորդական կամ չորրորդական փոխանցում, նշանակում է, որ մենք ունենք երկրի ներսում վարակի դեպքեր: Ներկայումս կարանտինում գտնվում է 271, ինքնամեկուսացված է 1925 մարդ, եւ ես բոլորին կոչ եմ անում պահպանել երկրում սահմանված կանոնները,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

## ԱՊԱՔԻՆՎԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ԱՌԱՋԻՆ ՀԻՎԱՆԴԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 16-ին Վրաստանում առաջին ապաքինված հիվանդը լքել է Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցը:

Տղամարդուց վերջին մի քանի օրերին վերցվել են տարբեր նմուշներ, որոնց արդյունքում վարակ չի վավերացվել:

Կլինիկայից դուրս գրված հիվանդը երկու շաբաթ կմնա ինքնամեկուսացման մեջ:

Հիշեցնենք, որ Վրաստանում նոր կորոնավիրուսի առաջին դեպքը գրանցվել էր փետրվարի 26-ին: Վարակը հաստատվել էր Վրաստանի 55 ամյա քաղաքացու մոտ, ով Իրանից Վրաստան էր եկել Ադրբեջանի տարածքով:

## ՊԱԱՏԱ ԻՄՆԱՁԵ. «ԽՍՏՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԵՔ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»



Հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ Պաատա Իմնաձեի տեղեկատվության համաձայն, առանձին գործատուներն անհանգստացնում են ինքնամեկուսացված անձանց, որպեսզի նրանք ներկայանան աշխատանքի:

Ազգային կենտրոնի փոխտնօրենը անդրադարձավ նաեւ արտասահմանից Վրաստան վերադարձողների թեմային՝ վերջիններիս կոչ անելով հեռու մնալ իրենց հարազատներից եւ առավելագույնս պահպանել ինքնամեկուսացման կանոնները կամ կարանտինային ռեժիմը:

- Ինչպես գիտեք, ոստիկանությունն ակտիվ օգնում է հանրային առողջապահության ոլորտի աշխատողներին եւ, եթե չեմ սխալվում, 10-ից ավելի անձ, ովքեր խախտել են ինքնամեկուսացման կանոնները, տեղափոխվել են կարանտինային գոտի: Այս աշխատանքը կշարունակվի, եւ ես բոլորին կոչ եմ անում պահպանել ինքնամեկուսացման կանոնները: Մենք ունենք տեղեկություն, որ գործատուներն անհանգստացնում են ինքնամեկուսացված անձանց, որպեսզի ներկայանան աշխատանքի: Մենք, իհարկե, ձեռնպահ ենք մնում անձնական տվյալներ փոխանցելուց, բայց եթե նման գործատուները շարունակեն անհանգստացնել ինքնամեկուսացված անձանց, ես անձամբ կխախտեմ ամեն ինչ եւ կներկայացնեմ նրանց: Ես կարող եմ խոսել միայն իմ հարազատների մասին, իմ զարմիկի որդին արդեն երրորդ օրն է ժամանել է եւ գտնվում է կարանտինում,- հայտարարեց Պաատա Իմնաձեն:

## COVID-19. ՀԱՄԱՎԱՐԱԿ ԱՇԽԱՐՀԻ 170 ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՎԱՐԱԿՎԵԼ Է 245,5 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

*Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսով՝ COVID-2019-ով վարակվածների թիվն անցել է 220 հազարը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, վարակվել է 225 հազար 381 մարդ, մահացածների թիվը 9 հազար 276 է, ապաքինվել է 85 հազար 831 անձ: Կորոնավիրուսը տարածում է գտել աշխարհի 170-ից ավելի երկրներում եւ տարածքներում:*




Վարակվածների մեծ թվով շարունակում է մնալ Չինաստանը, որտեղից էլ սկսվել է բռնկումը: Չինաստանում վարակվածների թիվը մոտ է 81 հազարին, սակայն այստեղ դրական դինամիկա է նկատվում նոր հայտնաբերված դեպքերի թվում: Նկատելիորեն կրճատվել են նոր դեպքերը:

Վարակվածների մեծ թվով երկրորդ տեղում Իտալիան է, որտեղ կորոնավիրուսի հաստատման 35 հազար 710-ից ավելի դեպք կա: Իտալիան, եվրոպական այն երկրներից է, որտեղ բարձր է վիրուսից մահացության ցուցանիշը: Վերջին տվյալներով, այնտեղ կորոնավիրուսից մահացել է 2 հազար 978 մարդ: Իտալիային հաջորդում է Իրանը, որտեղ հաստատված 18 հազար 407 դեպք կա, 1200-ից ավելի մահացածներ: Կորոնավիրուսի վարակվածության մեծ թիվ է գրանցվել նաեւ Իսպանիայում՝ 17 հազար 147, Գերմանիայում՝ 13 հազար 083, ԱՄՆ-ում՝ 9 հազար 464, Ֆրանսիայում՝ 9 հազար 134, Հարավային Կորեայում `8 հազար 565, Շվեյցարիայում՝ 3 հազար 347, Միացյալ Թագավորությունում՝ 2 հազար 626:

Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի վարակումներից զերծ չմնացին նաեւ Հարավային Կովկասի երկրները:

Մարտի 20-ի դրությամբ, Հայաստանում վարակվածների թիվը հասել է 136-ի, շուրջ 600 մարդ ապրում է կարանտինի պայմաններում: Կա նաեւ առաջընթաց՝ վարակվածներից մեկը ապաքինվել է: Հայաստանում նոր վարակի նման կրտուկ տարածումը պայմանավորված էր Էջմիածնում հարսանյաց հանդեսին վարակվածի ներկայությամբ, ինչպես նաեւ մեկ այլ վարակվածի կողմից իր աշխատատեղ՝ կարի արտադրամաս գնալով: Այդ ամենի արդյունքում, երկրում մարտի 16-ից հայտարարվեց արտակարգ դրություն:

Ադրբեջանում եւ Թուրքիայում չնայած կորոնովիրուսով վարակվածների համեմատաբար քիչ քանակության, գրանցվել են առաջին զոհերը: Այսպես. Ադրբեջանում ներկա դրությամբ գրանցված է 44 վարակված, որոնցից վեցը բուժվել են: Գրանցվել է մեկ մահ: Ռուսաստանում, պաշտոնական տվյալներով գրանցված է 199 վարակված, կա մեկ զոհ, 9 առողջացած: Թուրքիայում վարակվածների թիվը հասել է 359-ի, զոհերի թիվը՝ 4-ի: Նշենք, որ վերջին տվյալներով, կորոնավիրուսով վարակման փաստեր են հայտնաբերվել նաեւ Սիրիայում գտնվող թուրքական զորամիավորումում:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*